«Կուբ Ինվեսթ» ՓԲԸ

Ղեկավարության հայտարարությունը 2021 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և հաստատման պատասխանատվության վերաբերյալ

Ղեկավարությունը պատասխանատու է «Կուբ Ինվեսթ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ «Ընկերություն») 2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակը, նույն ամսաթվին ավարտված տարվա գործունեության արդյունքները, դրամական միջոցների հոսքերը և Ընկերության բաժնետիրական կապիտալի փոփոխությունները ճշմարիտ ներկայացնող, ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին (ՖՀՄՍ) համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և հաստատման համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է՝

- Հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճ ընտրության և կիրառման համար,
- Հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ ներկայացվող տեղեկատվության համապատասխանության, վստահելիության, համեմատականության և հասկանալիության համար,
- Լրացուցիչ բացահայտումների տրամադրման համար, երբ ՖՀՄՍ-ի հատուկ պահանջների համապատասխանությունը բավարար չէ, որպեսզի օգտագործողները պատկերացում կազմեն Ընկերության ֆինանսական վիճակի և կատարողականի վրա որոշակի գործարքների, այլ իրադարձությունների և պայմանների ունեցած ազդեցության մասին,
- Ընկերության գործունեության անընդհատությունն ապահովելու կարողության գնահատման համար:

Ղեկավարությունը նաև պատասխանատու է՝

- Ընկերության ներքին վերահսկողության արդյունավետ և ողջամիտ համակարգ մշակելու, ներդնելու և պահպանելու համար,
- Համապատասխան հաշվապահական գրանցումներ վարելու համար, որոնք բավարար կլինեն Ընկերության գործառնությունները արտացոլելու և ներկայացնելու և ցանկացած ժամանակ Ընկերության ֆինանսական վիճակը ողջամիտ ճշգրտությամբ բացահայտելու համար, ինչպես նաև հնարավորություն կընձեռեն ղեկավարությանը հավաստիանալու, որ Ընկերության ֆինանսական հաշվետվությունները համապատասխանում են ՖՀՄՍ-ներին,
- ՀՀ օրենսդրության և հաշվապահական ստանդարտների պահանջներին համապատասխան հաշվապահական հաշվառման վարումը կազմակերպելու համար,
- Ընկերության ակտիվների անվտանգության ապահովման համար խելամիտ քայլերի իրականացման համար,
- Խարդախությունների և նմանատիպ այլ երևույթների բացահայտման և կանխարգելման համար:

Ընկերության 2021 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2022 թվականի փետրվարի 28-ին:

Գործադիր տնօրեն

Արսեն Սիմոնյան

Հաշվապահական հաշվառման ծառայություններ մատուցող ընկերության ներկայացուցիչ

Գայանե Վարդանյան

28 փետրվարի, 2022թ.

Երևան, Հայաստանի Հանրապետություն